ԴԱՅՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԵԾԱՊԱՏԻՒ ԺՈՂՈՎ.

(Շարունակութիւն, տես թիւ (1)։

Օվ ուսանելի առարկայից բոլորովին ազատելը՝ մի քանի երեխայի աւելի օգուտ կը բերէր, քանթէ վնաս. այն ինչ միւսները, մանաւանդ ստորին դասատներում, նոյն առարկայով կ'զբաղուէին աւելի նպատակի յարմարութեամբ ոչ թէ ամբողջ ժամերով, այլ աւելի կարճ ժամանակով։ Այս բոլոր և ուրիշ մանկավարժական խորհուրդները չէ թուլատրում մի հասարակական վարժարանի կարգադրութիւն և շատ ծնողներ էլ չէին ցանկանալ իրանց դուստրներին՝ Ֆրանսերէն և Անգլերէն դասերից ազատ տեսնել, թէեւ առաջուց էլ տեսնելու է որ նրանք երբէք արժանայիշատակ պատրաստութիւն չենուենենալու այս լեզուները հասկանալում և խօսելում. և դժուար թէ երբ և իցէ գործածելու տեղ էլ պատահի։ Բայց եթէ Ֆրանսերէն քերականութիւնը սովորելուց այսպիսի գլխաւոր օգուտ պիտի ստանալ, շատ քիչ ծնողներ բաւականութիւն կը գտնեն։

Յետոյ ուսանելու շատ շատ ժամերին և առարկայներին միանում են տան վարժարանական դասերը, որոնց ճշմարիտ չափը և համեմատութիւնը իրար հետ միասին դասատու վարժապետները այնպէս քիչ են հասկանում, որ մի հմուտ նկատողն ասելով՝ մի մեղսագործութիւն է լինում երեխանց ընտանեկան կեանքի և առողջութեան մէջ։ Նկատած այս վերջինն էլ։ Որովհետեւ եթէ վերջ առնում արդէն յիշեալի հետ՝ առանձին անհրաժեշտ դասեր էլ, հոգու վրայ մնում է ամենից մի անքնական ծանրաբեռնութեան տպաւորութիւն իսկ և իսկ ծաղկեալ ժամանակում. և այսպէսով էլ հասկանալի է, թէ ինչպէս շատ երեխայ, այս տարիներում այսպիսի նեղութիւններ կրելով և չափազանց գրգռուելով, յետագայ ցաւագարութեան հիմքը դնում է։ Այս վտանգը ճանաչող ծնողներն երբեմն չեն էլ կարողանում ուրիշ ձեւով օգնութիւն հասցնել, բայց միայն, որ եթէ մի քանի ուսանելի առարկայներից ազատելու չէ, իրանց դուստրները ժամանակ առ ժամանակ քանի շաբաթներով տուն են պահում. որպէս զի դուստրները կարողանան զօրութիւն ստանան՝ վարժարանի պահանջողութիւններին բաւականութիւն տալու։ Բայց հաղիւ չէ երեւում մի վաղ թառամեալ երիտասարդական նրբութիւն. մանաւանդ նրբանցում, որոնք կամենում են իրանց նուիրել ուսուցչական կոչումին կամ ուսուցչուհիներ դառնալ։ Շատերը այս նպատակին չեն հասնում, ուժի հասնելուց։

Նորերում շատ վարժարաններում մի ուրախալի քայլ դէպ 'ի աւելի նրանով է եղել, որ վերին և միջին դասատներում բոլոր ուսումնական դասերը ճաշից առաջ են. իսկ ճաշից յետոյ՝ միայն կանանց ձեռագործութեամբ է պարապւում, որին մասնակից լինելու ստիպուած չեն աշակերտուհիները։ Այսպէսով կարելի է, որ յաճախ չկրկնուի մի շատ անգամ հեռի վարժարանական ճանապարհ և ժամանակ շահուի տնային գործերին էլ մասնակցելու, որոնք այժմ աղջիկների համար շատ անգամ բոլորովին խորթ են. որովհետեւ աղջիկները գրեթէ միմիայն վարժարանով են զբաղուել, կամ իրանք աղջիկները նրանցից հեռանում են 'ի վնաս մա-

digitised by A.R.A.R.@

սամբ իրանց կանացի (իգական) կատարեալ կրթութեան և մասամբ իրանց առողջութեան։

Ուսանելի նիւթով բեռնաւորելուն՝ շատ անգամ պատահում է այն վատթար դրութիւնը, ուր շատ քիչ զգուշութիւն է պահպանւում աշակերտուհիների առ հասարակ հոգեկան զարգացման և հասակին մէջ ուսման ցուցակը իրագործելիս։ Այս լինում է յատկապէս բնական և գրականական պատմութիւնների մէջ, երբ օրինակի համար, 12 տարեկան երեխայները, որոնց գեռ եւս մայրենի լեզուում հեշտ բաները նեղութիւն են տալիս, միտին ուսանում են արդէն Դրանսիացւոց գրականութեան պատմութիւնն էլ. կամ արդէն կրթուում են բնագիտութիւն կենդանաբանութեան և ուրիշների մէջ ուսումնական մանրամասնութեամբ և Տերմիներէն կամ Յունարէն անուանակոչութեամբ (Terminoloı ie) այնպիսի ձեւով, որի օգուտը կանանց կրթութեան համար առ հասարակ կասկածելի է։ Շատ վարժարաններ էլ պատրաստում կամ առ հասարակ մի դասախարակութեան ձեւում, որը աւելի համադասական (Systematich) է, քանթէ ձեւաւորական (Methodisch) չեն, կարողանում իրանց ապատ կացութեանել այն վարմունքից, որը ընդունել են գիւմնազիւմների և իրական վարժարանների համար։

Նրանք չեն նկատել թէ՝ այսպէս իմանալը և ժողոված գրական գիտութիւնը՝ տղի և նրա յատկութեան համար մի ուրիշ արժանաւորութիւն ունի, քան թէ աղջկերանց կրթութեան համար։ Անհրաժեշտ է այստեղ նմանապէս, որ կանանց վարժարանների կոլովամիա գլխաւորների օրինակով և ներգործութեամբ՝ նշանաւոր յառաջադիմութիւններ են եղած վարժարանների սեպհական կարգերը լուցանելուն համար. բայց այնու ամենայնիւ դուստրների բարձր վարժարանների միշտ գլխաւոր կարօտութիւնները դեռ այն բաւականաչափ վարժապետներն են, որոնք այս բանի համար կամ առաջուց կրթուած են, կամ ունին մանկութեանց յարմարութիւն կամ կոչում։ Նրանք, որոնք սրացից զուրկ են, առանց իմանալու այն սխալն են անում, որը միւս վարժարաններում ելել երեւում, երբ նրանք չէ թէ այսպէս հարց են տալիս իրանց։ Ինչ են անում այս երեխայքը իմ առաջին և ինչպէս կարող եմ անձնապէս սրանց հասկացնել. այլ թէ ինչ է գրուած գրքումը։ Արանից կախում և երբէք չաւակատացող գերմանական խորամտութիւնը՝ դասախարակութեան մէջ շատով այն ուսումնական կատարելութեան է հասցնում, որի ամենապակաս տեղը աղջկերանց վարժարանն է. և որի տեղ չէ մի ժամանակ չպէտի բռնի մի թերակատարութիւն։ Սրա հակառակը այն վարմունքն է, որը ունին ամենից միայն մի քանիները, բայց ամենից համարուած սխորժելին. մի ուղղութիւն, որը առաջ, երբ մարդ կարծում էր թէ՝ ամենքից առաջ կանանց կրթութեան մի դեղարուեստական հիմ դնելու է, էլ աւելի դուրս պրծաւ քանթէ այժմ։

Դուստրների բարձր վարժարաններում ամենահարկաւոր և ամենադրժուար առարկայների կարգիցն է գերմաներէնը։ Շատ դէպքերում աղջիկները ամենեւին չեն կարօտում գերմաներէն քերականութիւնը առանձնապէս սովորելու. գոնէ ոչ այնպէս ընդարձակ ձեւով, ինչպէս շատ անգամ սովորում են։ Հաղիւ ան-

digitised by A.R.A.R.@

գամ մըչէ շարունակում՝ քերականու-
թեան դասը, մանաւանդ համաձայ-
նութեանը՝ մինչեւ վերին դասատնե-
ը. և անարդիւնք է մանաւանդ այն-
ժամանակը, երբ չեն համաձայնւում
քերականութեան տեսութեան մէջ
ոչ իրաբ ետեւից հետեւող դասա-
տուների վարժարանները և ոչ գեր-
մաներէնի հետ և առաջ գնացող օ-
տար լեզուների քերականութեան
դասը այն յարաբերութիւնը ունի,
որը լեզուի գիտութեան միութիւնը
և շիտութիւնը կարող է բառնալ։
Աղջկերանց վարժարաններում գեր-
մաներէն ոճում վարժուելիս՝ շատ
անգամ տեսնում է, որ պարզու-
թեան և չափաւորութեան համար
մանկավարժական միայր չկայ և շատ
վարժարան ծնողներին առիթ է տա-
լիս տրտնջելու, թէ իրանց երեխայ-
ները պարբերութիւնների կամ հենց
«յօդուածների» մէջ այն բաների
վրայ պիտի դատողութիւններ անեն
որոնք իրանց հոգիներից շատ հեռի են
անցնում։ Արանում են յառաջանում
անհաւատալի անշրջանկատութիւն-
ներ (Ungläubliche Missgriffe)։ Ցառաջերկու-
տարեկան աղջիկները պիտի գրեն ող-
բերգութեան ծագման վրայ, առա-
քինութեան արժանաւորութեան վը-
րայ մանկական, անմեղութեան շքե-
ղութեան վրայ։ Մէկը այսպիսի երե-
խայներին Շիլերի կատաղրայից այս
նիւթն էր տուել, «Միայն սխալուե-
լն է կեանքը. իսկ իմանալը՝ մահը»։
Ցամակագրութեան մէջ վարժուելու
համար. մտածած տեղերն են տալիս
օրինակի համար, նամակ մի եղբօր վը-
րայ, որը Շլեզվիգումն է և վիրաւոր-
ուած, — մի վարուողութիւն, որ ա-
ռաջ է բերում ստութիւն և բառաձ-
գութիւն (Dhrasenmacherci)։ Ցթէ կեն-
ցաղավարութեան ժամանակ տեղն
ունկնի, կանայքը կը գիտենան անկիրթ
մտքով՝ այնպէս գեղեցիկ մտքով նա-
մակներ գրել, որ հարկաւոր չի լինիլ
թէ՝ վարժարանը նրանց այդ մասին
առաջուց էր պատրաստել։ Այնպէս
և գերմանացւոց գրական պատմու-
թեանց վեր են առնում նիւթեր.
օրինակի համար բանաստեղծների հա-
մեմատութիւնը, նրանց կեանքը և
նրանց երկասիրութիւնները։ Շիլե-
րը համեմատել Գօէթէի հետ, նմա-
նապէս Ուհլանդը՝ Հէյնէի հետ, ուր
մերձ է խակ և անկանոնցի դատողու-
թեան վտանգը։ Հենց գրականու-
թեան պատմութեան դասը շատ ան-
գամ անհամեմատ ընդարձակում է
և միշտ բաց է թողնում գերմանե-
րէնի ժամերում, պատմական բանե-
ը հաղորդելիս, դաղափարներ պարզ
ըմբռնելում և իրարից զանազան ե-
լում այն շատ հարկաւոր վարժողու-
թիւնը, որը կարող է վաղ ներգործ-
ել այն չափազանց վերացական ըմ-
բռնողութեան հակառակ, որին կա-
նանց ոգին է հակուած, և առաջնոր-
դել դէպ ի պարզ մտածողութիւնը,
որը ինչպէս և իսկ նախապատուելի
է յիշողութիւնը միմիայն հարստացը-
նելուն։ Մի կողմանէ դարձեալ վատ
է, գրականութիւնը անցնելիս՝ անար-
դիւնք լինութիւն պահպանել անուն-
ների, թուերի և նկատմունքների մէջ,
ապա ոտանաւորները ճշգրտիւ լու-
ծելը, որի ժամանակ բանաստեղծու-
թիւնը խուսափում է։ Ուր հարկա-
ւոր է բաց մտքով ըմբռնել և ճաշա-
կել, սակաւ անգամ չէ պահանջում
մի քննադատական նկատողութիւն,
կամ հենց առաջարկում, ոտանաւո-
ը արձակ շարադրութեան փոխել
և այսպիսի շատ բաներ։

Կիտեմ որ աղջկերանց վարժա-
բաններում էլ ինչպէս գերմաներէ-

digitised by A.R.A.R.@

նի, նոյնպէս և միւս իւրաքանչիւր գաւառի համար վարժապետ կայ և առաջացած վատ հանգամանքները լաւանում են տեսչութիւնների և տեսուչների առողջ մտածողութեան և անքուն հսկողութեան միջնորդութիւնը որքան այն վարժապետների պակասութիւնը թուլատրում է, որոնք այսպիսի վարժարաններում իրանց բանը գիտեն և նրա համար մեծացող են։ Բայց գիտեմ էլ, որ վարժարանների ձեռնարկութիւններում նախանձաւորութիւնը՝ և հասարակութեան փոխոխուն հայեացքներից և պահանջմունքներից կախումը իրանցով մի մեծ վտանգ են առաջ բերում, որով դուստրների բարձր վարժարանները և աղջկերանց կրթարանները մանկավարժութեան կողմանէ սաստիկ ծուլութիւն է մտնում, իսկ դասի կողմանէ՝ արտաքուստ շատ ցուցանողութիւն (im Unterricht viel Schenxesen)։

Շարունակութիւն։

ԱՐԿԱԾՔ

ԱՐԻՍԹՈՆՕԻԻՍԻ

(Շարունակութիւն և վերջ, տես թիւ (4)։

Ի մաստուն ծերունին խաղաղութեամբ կապրէր, վայելելով այն ամէն բարիքները, զորս աստուածներն իւր առաքինութեան պարգեւած էին։ Իւրաքանչիւր տարի, իւր ծերութեանը չը նայելով, ճանապարհորդութիւն մը կընէր դէպ ի Լիսի, Սոֆրոնիմը վերստին տեսնելու և Լսինի գերեզմանին վրայ զոհ մը ընելու համար, զոր ճարտարապետութեան և քանդակագործութեան գեղեցիկ զարդարանքներով հարստացուցած էր։

Արդէն պատուիրած էր որ իր իսկ աճիւնը, իւր մեռնելէն զկնի միւնոյն գերեզմանը բերուի, որպէս զի իւր ամենասիրելի տիրոջ աճիւնին հետ յաւիտեանս միասին հանգչին։

Իւրաքանչիւր տարի գարնան ժամանակ, Սոֆրոնիմը՝ զանիկայ կրկին տեսնելու անհամբեր, իւր աչքերը ծովուն ափանց այն կողման վրայէն չէր վերցուներ, ուրկից կը ջանար նշմարել Արիսթոնիւսին նաւը, որ այս եղանակին մէջ կուգար։

Իւրաքանչիւր տարի գառն ալիքներուն մէջէն այն իրեն այնքան սիրելի նաւուն հեռուն գալը տեսնելու զուարճութիւնը կունենար. և այս նաւուն գալուստը իրեն աւելի քաղցր էր քան նորածիլ բնութեան այն ամէն շնորհքները, զոր գարնան ժամանակ երկրիս վրայ կը տիրէ, սոսկալի ձմրանէն յետոյ։

Տարի մը Սոֆրոնիմ չէր տեսներ այլ և այս ցանկալի նաւուն գալը ամէն տարիներու պէս. գառնապէս կը հառաչէր, տխրութիւնն ու երկիւղը իւր դիմաց վրայ նկարուած էին. քաղցր քունը իւր աչքերէն հեռի կը փախչէր, ոչ մի ընտիր կերակուր իրեն քաղցր երեւէր. անհանգիստ կըլլար և ամէն փոքր աղաղակէ մը անգամ կը նեղուէր, միշտ երեսը դէպ ի նաւահանգիստը դարձուցած էր. և ամէն վայրկեան կը հարցնէր թէ արդեօք Իոնի կողմանէ նաւումը գալուստը տեսած են։

Վերջապէս Սոֆրոնիմ նաւ մը տեսաւ, բայց աւաղ. Արիստոնոիւս մեջը չէր. անոր աճիւնը միայն կը բերէր նա արծաթեայ սափորով մը։ Սիսիլիկէս՝ մեռելոյն հին բարեկամն և գրեթէ իրեն հաստակիից, անոր վեր-

digitised by A.R.A.R.@